ԶԱԳԱԶՈՐԻ ՏԵՂԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

ԱՐՄԵՆ ՂԱՐԱԳՅՈԶՅԱՆ

X դ. Տաթևի վանքին հարկատու գյուղերի հին ցուցակում (Սյունյաց աշխարհի Հաբանդ գավառում) հիշատակվել է Զագաձոր անունով գյուղ[1]։ Բնակավայրը ունեցել է բերդ, որի մասին Ստեփանոս Օրբելյանը գրել է. «Հաբանդայ բերդ, որ ի նոյն տոհմէ Սիսակայ ի Զագայ Նահապետէ շինեալ ի վերայ գետոյ միոյ կոչէ յիւր անուն ղձորն Զագեձոր և զբերդն՝ Զագէձորոյ բերդ...»[2]։ XIII դ. կեսին Զագաձորի բերդը եղել է Սյունիքում մոնղոլական զորահրամանատարի նստավայրը, «Քանզի ընդ այն ժամանակս էր զօրագլուխ նետողացն, որպէս թագաւոր ի վերայ ամենեցուն Բաչու՝ Նոյինն. և նստէր ի գաւառին Հաբանդայ՝ ի գլուխ Զագէձորոյ...»[3]։ Զագաձոր անունը հետագայում տարածվել է ամբողջ գավառի վրա։ XVII դ. սկզբին վկայվել է Զագաձորու երկիրը (գավառը), որը փոխարինել է Հաբանդ գավառանվանը[4]։ Զագաձորը գտնվել է Գորիս գետի հովտում[5], սակայն նրա աշխարհագրական դիրքն անհայտ է։ Զագաձորի տեղադրությանն անդրադարձողները հայտնել են տարբեր կարծիքներ։ Ըստ Ղ. Ալիշանի Զագաձորի բերդը եղել է հին Գորիսի (Վերին շեն) շրջանում[6]։ «Զանգեզուր անունն, ըստ Հայր Ալիշանի, ծագել է Զագեձոր անվան աղավաղումից, իսկ սա՝ Զագ Նահապետի անունից։ Հավանական համարելով առաջին ենթադրությունը՝ կարծում ենք, որ Զագեձոր խոսքն էլ առաջացել է ոչ թե Զագ Նահապետի, այլ «ծակերի ձոր» անունից, որովհետև հենց այժմ էլ, Գորիսից փոքր ինչ բարձր գտնվող ձորը, ուր եղել է ամենահին բնակությունը, կոչվում է «ծակերի-ձոր» այդտեղ գտնվող բազմաթիվ «ծակեր»-արհեստական- քարայրի պատճառով»[7],—գրում է Ե. Լալայանը։ Ս. Բարխուդարյանի ենթադրությամբ Զագաձոր գյուղը գտնվել է Ծակերի ձոր վայրում, իսկ բերդը՝ Գորիսից հարավ, Լաստ լեռան գագաթին[8]։ Թ. Հակոբյանը հավանական է համարել Ղ. Ալիշանի ենթադրությունը[9]։ Ս. Լիսիցյանը անդրադարձել է այդ տեղանուններին, սակայն չի ճշտել դրանց տեղադրությունը[10]։ Մ. Հով-

---

1 «Պատմութիւն նահանգին Սիսական, արարեալ Ստեփաննոսի Օրբէլեան արքեպիսկոպոսի Սիւնեաց» (այսուհետև՝ Ստեփաննոսի Օրբէլեան), Թիֆլիս, 1910, էջ 517։

2 Նույն տեղում, էջ 13։

3 Նույն տեղում, էջ 405—406։

4 «Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ (1621—1640)», հ. Բ, Երևան, 1978, էջ 188։ Ժամանակի ընթացքում այդ անունը աղավաղվել և դարձել է Զանգեզուր (Ղ. Ալիշան, Սիսական, Վենետիկ, 1893, էջ 261)։ XVII—XVIII դդ. Տաթևի թեմի «պտղի» ցուցակում վկայվել են «Զանկեազուր» գավառի 12 գյուղ («ժամանակագրութիւն Ստեփաննոսի Օրպէլեանի», Երևան, 1942, էջ 42)։

5 Այն դետը, որի ափին, ըստ Ստեփանոս Օրբելյանի վերոհիշյալ վկայության, գտնվել է բերդը, կոչվել է Վարարակ (Ստեփաննոսի Օրբէլեան, էջ 253)։ Այս անունով հայտնի է այն հորդաբուխ աղբյուրը, որից սկիզբ է առնում Գորիս գետը [Ե. Լալայան, Զանգեզուր («Ազգագրական հանդես», 1898, № 2, էջ 22)]։

6 Ղ. Ալիշան, նշվ. աշխ., էջ 261։

7 Ե. Լալայան, նշվ. հոդվ., էջ 7։

8 «Դիվան հայ վիմագրության», պրակ 2, Երևան, 1960, էջ 78։

9 Թ. Խ. Հակոբյան, Սյունիքի թագավորությունը, Երևան, 1966, էջ 158։

10 Ս. Լիսիցյան, Զանգեզուրի հայերը, Երևան, 1969, էջ 19։

հաննեսյանը հայտնել է հետևյալ կարծիքը. «Օրբելյանի «ի վերայ գետոյ միոյ» բացատրությունը՝ մեզի ենթադրել կու տա թե ակնարկությունը Կորեսս գետի մասին է, որ Զագեձորի մեջեն կանցնի»[11]։ Ն. Պապուխյանը Զագաձորը համարել է Գորիսը (Կորեսս)[12]։

Գորիսի և Զագաձորի նույնացումը ճիշտ լինել չի կարող, որովհետև դրանք տարբեր բնակավայրեր են և վկայվել են միասին Տաթևի վանքին հարկատու գյուղերի հին ցուցակում[13]։ Անհավանական է նաև Զագաձորի և Ծակերի ձոր տեղանունների նույնացումը։ Այստեղ առկա է միայն երկու տարբեր անվանումների զուտ հնչյունական արտաքին նմանություն։ Ծակերի ձորը հավանաբար Գորայքի հետ վկայված Աղոջրիկ[14] գյուղն է, որն իր անունը կարող էր ստանալ Շոռ ջուր վտակը կազմող սելտերյան աղբյուրներից, որոնց մասին ժամանակին հիշատակել է Ե. Լալայանը[15]։ Զագաձորի տեղադրության հարցում որոշակի պարզություն է մտցնում Տաթևի վանքին հարկատու գյուղերի հին ցուցակի քննությունը։ Այդ ցուցակում Զագաձորը և մի քանի այլ բնակավայրեր հիշատակվել են հետևյալ հաջորդականությամբ. «...Ականայ, Զագաձոր, Պետրոսկայ վանք, Նախանձփոր, Աղոջրիկ, Գորայք...»[16]։ Թվարկված գյուղերից հայտնի է միայն Աղոջրիկի և Գորայքի աշխարհագրական դիրքը։ Ակնհայտ է նաև Ականա գյուղի տեղադրությունը. այն, անկասկած, գտնվել է Վարարակ աղբյուրի մոտ, որից և ստացել է իր անունը։ Տվյալ դեպքում Ականան «Գյավուրի բներ» գյուղատեղին է, որովհետև ավելի մոտ է տեղադրված Վարարակին, քան գետի վերին հոսանքի շրջանում գտնվող մյուս բնակատեղիները։ Այս գյուղի տեղորոշմամբ որոշակիորեն հայտնի է դառնում այն շրջանը, որտեղ գտնվել է Զագաձորը։ Դա համընկնում է ներկայիս Բռուն գյուղի տարածքին և նրա շրջակայքին։ Այդ շրջանում են գտնվում Զալեր, Ավի դարա, հին Բռուն, Կյուփեր, բնակատեղիները։ Բացառությամբ հին Բռուն[17] գյուղի (կառուցվել է գետափին գտնվող մի հրվանդանի վրա), մյուս գյուղատեղիները տեղադրված են հարթավայրում, և տեղանքը աննպաստ է բերդ հիմնելու համար։ Հետևաբար, ամենայն հավանականությամբ Զագաձորը եղել է հին Բռուն գյուղի տեղում։ Օ. Խնկիկյանի հայտնաբերած նյութերը (1980 թ.) որոնք թվագրվում են մ. թ. ա. II—I դդ.[18], նույնպես վկայում են Բռուն գյուղի տարածքում ավելի վաղ շրջանում բնակավայր լինելու մասին։

Տաթևի վանքին հարկատու գյուղերի հին ցուցակում նշված վերոհիշյալ գյուղերի հաջորդականությունը համեմատելով Զագաձորի հովտում գտնվող բնակատեղիների տեղաբաշխման հետ, կարելի է տեղորոշել նաև Պետրոսկա վանքը և Նախանձփորը (Նախանձոր)[19]։ Դրանք գտնվել են Զագաձոր և Աղոջրիկ գյուղերի միջև։ Այդ տեղամասում են Վերիշեն գյուղը (Պղնձաքար լեռների

---

11 Մ. Հովհաննեսյան, Հայաստանի բերդերը, Վենետիկ, 1970, էջ 335։

12 Ն. Ծ. Պապուխյան, Սյունիքի ժողովրդական ճարտարապետությունը, Երևան, 1972, էջ 36։

13 Ստեփաննոսի Օրբելեան, էջ 517։

14 Նույն տեղում։ Տեղանունը հիշատակվել է նաև Աղնոյ ջրիկ ձևով (տե՛ս «Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի Պատմութիւն տանն Սիսական», Մոսկվա, 1861, էջ 375)։ «Աղոյ (սեռ. Աղի բառին)+ջրիկ այս է՝ ջուր+իկ մասնիկ» (Հ. Հյուբշման, Հին հայոց տեղոյ անունները, Վիեննա, 1907, էջ 299)։

15 Ե. Լալայան, նշվ. հոդվ., էջ 24։

16 Ստեփաննոսի Օրբելեան, էջ 517։

17 Գյուղը հիմնադրվել է 1880 թ. («Հայկական սովետական հանրագիտարան», հ. 2, Երևան, 1976, էջ 541)։

18 Օ. Խնկիկյան, Նորահայտ հուշարձան Գորիսում («Պատմա-բանասիրական հանդես» այսուհետև՝ ՊԲՀ), 1981, № 4, էջ 312—313)։

19 «Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի Պատմութիւն տանն Սիսական», էջ 375։


ՀԱՅԿԱՆ ԳՅՈՒՂԱՏԵՂԻՆ (IX-XIII դդ.)
ԳՅՈՒՂԱՏԵՂԻՆԵՐԻ ՆԻՇԵՐԸ
Ամուրջ
Ամրոց
Ամրոցաբնակավայր
Ամրոցաբնակավայրերի ավերակներ
Գյուղատեղի ավերակներ
Գրչություն
Դպրոց
Եկեղեցի
Ոռոգանալի հողեր
Ոռոգանալի հողերի ավերակներ
Ջրաղաց
Ջրերի վերաբերյալ

լանջին) և Սինդարա բնակատեղին[20]։ XIX դ. վերջին այստեղ եղել է նաև մի ավերակ վանք[21]։ Այս ամենից ելնելով, կարելի է եզրակացնել, որ այդ եկեղեցական շինությունը եղել է Պետրոսկա վանքը, իսկ Սինդարա բնակատեղին՝ Նախանձփոր գյուղը։ Նմանապես կարելի է պարզել մեկ այլ բնակավայրի՝ Ուսկաձագի (Ուսկածակ)[22] տեղադրությունը, որը հիշատակվել է Գորայք գյուղից հետո։ Այն կարող է լինել միայն Օփավեր[23] վայրում գտնվող բնակատեղին, որը ունեցել է նաև բերդ[24]։

МЕСТОПОЛОЖЕНИЕ ДЗАГАДЗОРА

АРМЕН КАРАГЕЗЯН

Резюме

В старом списке податных деревень Татевского монастыря (X в.) в гаваре Абанд Сюникской провинции упоминается село Дзагадзор. Это поселение имело крепость, о которой сообщает историк Степанос Орбелян. В середине XIII в. крепость Дзагадзор являлась резиденцией монгольского военачальника в Сюнике и, вероятно, административным центром гавара. В дальнейшем это название распространилось на всю округу. В начале XVII в. упоминается страна Дзагадзор, название, которое заменило название Абанд.

На основе сравнения рукописных данных с материалами, полученными при изучении местности, установлено местоположение Дзагадзора, который находился на месте старого села Брун Горисского района. Установлены также местоположения поселений Акан, Петроска ванк, Нахандзапор, Аходжрик, Ускацак, которые упоминаются вместе с Дзагадзором.

---

20 «Այստեղ կա մի քարաշեն, կամարակապ եկեղեցու ավերակ և բավականաչափ «քարատակ»-ներ, մի քանիսը քերծերի, մյուսները հողի մեջ փորված» (Ե. Լալայան, նշվ. հոդվ., էջ 30)։

21 «Նոր Գորիսից դեպի հյուսիս, հաղիվ մի վերստ հեռավորությամբ միևնույն հովտում գտնվում է մի քարաշեն, գեղեցիկ վանքի ավերակ, քանդված պարսպով ու մի քանի խցերով։ Մի քիչ ներքև վազելիս է եղել մի սառնորակ աղբյուր, որ այժմ Գ. Միրումյանի ծախսով տարված է Նոր Գորիս։ Ոչ մի արձանագրություն չկա բոլոր ավերակների վրա, միայն ավանդությունը պատմում է, թե սա երբեմնի շատ հարուստ վանք է եղել, ունեցել է բազմաթիվ հոտեր, որոնց տված կաթը խողովակներով հոսել է սարից մինչև վանքը։ Այստեղ է եղել և այն հորավոր (զոռ) զանգը, որն իր անունը տվել է գավառին» (Ե. Լալայան, նշվ. հոդվ., էջ 28)։ Այժմ այդ վանքը գոյություն չունի։

22 «Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի Պատմութիւն Սիսական», էջ 375։ Տեղանվան ճիշտ ձևը եղել է Ուսկածակ, սակայն «ձ» և «ծ» տառերի շփոթման հետևանքով դարձել Ուսկաձագ։ Բաղկացած է «Ուսակ» և «ծակ» բառերից։ «Ուսակ» բառը ստուգաբանվում է հուս, բլուր, բարձունք» [Գ. Մ. Գրիգորյան, Պատմական Սյունիքի մի շարք գյուղերի տեղադրության հարցի շուրջ (ՊԲՀ, 1966, № 4, էջ 134, ծան. 5)], իսկ «ծակը»՝ «ծակ, ծերպ, այր» (Հ. Հյուբշման, նշվ. աշխ., էջ 279)։ Հետևաբար, տեղանունը արտահայտել է «այրեր ունեցող բարձունք» իմաստը։

23 Հավանաբար՝ Ափավեր (ափից վեր գտնվող). հմմտ. Օ ն փ > Ա ն փ (տե՛ս Ա. Այվազյան, Նախիջևանի պատմաճարտարապետական հուշարձանները, Երևան, 1978, էջ 71) և այլն։ Այդ անունով է կոչվում Վարարակ գետի (Գորիս-Քարահունջ տանող ճանապարհին) աջ ափը իջնող լեռնաճյուղը, որի դեռնահայաց մասի այրերը ծառայել են իբրև կացարան։

24 Ե. Լալայանը բերդատեղին հիշատակել է «Օփավար» անունով (նշվ. հոդվ., էջ 28)։